ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ՝ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ, ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԵՌՈՆՕՐՀՆԵՎԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ

ԱՌԱՋԻԿԱ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25—30-Ը ՀՐԱՎԻՐՎՈՒՄ Է ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ՝ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ: ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՆԱԼՈՒ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ԻՍԿ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ, ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՈՆԻՆ՝ ՆԱԵՎ ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄԵՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ: ՀԱՄԱՁԱՅՆ 1945 ԹՎԱԿԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՀԱՍՏԱՏԱԾ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ, ՁԵՐ ԹԵՄԸ ԻՐԱՎԱՍՈՒ Է ԱՌԱՋԱԴՐԵԼ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԹՎՈՎ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐ: ՀԱՆՁՆԱՐԱՐՎՈՒՄ Է ԱՆՀԱՊԱՂ ՁԵՌՆԱՐԿԵԼ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԸՆՏՐՎԱԾՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ, ՀԱՅՐԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱԶԳԱՆՈՒՆՆԵՐԸ ՀԵՌԱԳՐՈՎ ՀԱՅՏՆԵԼ ՄԵՋ՝ ՎԻՃԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԻՄՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԲԱՐԵԽՆԱՄ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ: ՆԱՄԱԿԸ ՀԵՏԵՎՈՒՄ Է:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

18 օգոստոսի 1955 թ.
Էջմիածին